

լով ազատեցաւ Մեւքիսեղեկ կապանքներէն եւ մահէն (1612°) :

Ձուղայեցիք այս միջոցին ՂԴաւիթ կ'ուղարկեն իջմիածին, տիրանալու Աթոռին : Մեւքիսեղեկ թէպէտ ազատութիւնը դատած էր պայմանաւ որ «զնացեալ զաղարեսցէ ուրեք՝ լուեալ յիշխանութենէ կաթողիկոսութեան» (Դաւր. 218), բայց Ամիրզունա Սանի հովանաւորութեան տակ կը շարունակէր իւր գործունէութիւնն իբրեւ կաթողիկոս : 1613 Մարտ 22ին կը գրէր իւր թուղթն առ Պաւլոս Ե. : 1614 Ապրիլ 28ին կու տար յերեւան Մաղարդայ վանքին համար կոնդակ, որով կը ծանուցանէր թէ զՏէր Պետրոս նոյն մենաստանին եւ թեմին եպիսկոպոս է ձեռնադրած : Դաւիթ ստիպուած կը դիմէ Շահին եւ իրաւունք եւ

րէն այնպէս կ'իմացուի թէ Մեւք-Հայկազնի միջամտութիւնն ի նպաստ Մեւքիսեղեկի տեղի ունեցած է յԱգուլիս 1617ին. ուր բերուած էր Շահին հրամանաւ Մեւքիսեթ ի կապանս. Առաքել կը գրէ. «կալեալ էր Շահն զՄեւքիսեթն եւ կամէր սպանանել. իսկ վասն բարեխօսութեան Ամիրզունայ խանին ներեաց եւ ոչ սպան. բայց պահանջէր երեքհարիւր թուման տուգանս. վասն որոյ ի կապանս երկաթեայ պահէր ի կալանի, զի զայն վճարեսցէ եւ գնացեալ դադարեսցէ ուրեք՝ լուեալ յիշխանութենէ կաթողիկոսութեան» (էջ 218) : «Իսկ ի ժամանակին յայնմիկ արք խորհրդականք եւ երեւելիք, որք էին ի զուոն արքային, եթէ յայլազգեաց... եւ եթէ ի քրիստոնէից մեծամեծք, որ էր Սօջայ Նազարն, եւ Սօջայ Սուլթանումն եւ Միրվէլին եւ Մելիք Հայկազն եւ այլ բազումք, ասացին զՄեւքիսեթ կաթողիկոսն. Անհնար եղեւ դործդ քո, այլ սլարտիս տալ եւ զերծանել ի ձեռաց սորա» (էջ 219) : Գորիի եւ Ագուլիսի մէջ տեղի ունեցած զէպերն ու խօսակցութիւնները ձուլուած են ի մի :